ՅԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1—2, 1945 *Общественные науки*

Վ. Փոսուեի

ՀԱՅ ՊԱՇՊԱՆՈՂԱԿԱՆՆԵՐՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

19-րդ դարի 50—60-ական թվականների հայ մամուլում հեշտ չէ գտնել Անդրկովկասի և մասնավորապես Հայաստանի տնտեսական զարգացման հարցերին նվիրված հոդվածներ։ Նույնիսկ գյուղացիական ռեֆորմի նախապատրաստման և կենսագործման հարցերը մեր մամուլի բոլոր ուղղության օրգաններին անզգայության, հաժենայն դեպս անտարբերության վիճակից չհանեցին այդ տարիներին։

Դրությունն զգալիորեն փոխվում է հետևյալ երկու տասնամյակի ընթացքում։ Գյուղացիական ռեֆորմի արդյունքները հետզհետե այստեղ էլ երևան եկան։ Կալվածատիրական «ազատագրված» գյուղացին, իբրև կանոն, զրկվեց իր նախկին հողաբաժնի մի զգալի մասից և շարունակեց ոչ միայն կախման մեջ մնալ իր նախկին տիրոջից, այլև սկսեց խճճվել նոր շահագործողների նոր ցանցի մեջ, գյուղական բուրժուազիայի լուծը շարունակ ավելի ու ավելի զգալի դարձավ հետռեֆորմյան գյուղում։ Դրամական տնտեսության զարգացման պայմաններում այդ ավելի նկատելի եղավ այսպես կոչված պետական գյուղացիության մեջ, որի սակավահողությունը, պետական տուրքերով ու պարհակնելով ծանրաբեռնված լինելը նույնպես ակներև իրողություն էր, իսկ ֆեոդալական-ճորտատիրական հարաբերությունների մնացորդների ավելի թույլ կապանքը շատ ավելի նպաստավոր հող էր ստեղծում բուրժուական հարաբերությունների զարգացման, հետևաբար և բուրժուական շահագործման ծավալման համար հենց պետական գյուղացիության մեջ։

Թեև տարբեր չափով ու տարբեր տեմպով, բայց ամենուրեք Անդրկովկասի հայ գյուղերում (և՛ կալվածատիրական, և՛ պետական) հետզհետե ավելի ու ավելի պարզ կերպով զգացվում էր շուկայի, դրամական տնտեսության, գյուղի ու քաղաքի վաշխառուների, առևտրականների ազդեցությունը։ Սկսում էին երևան դալ տեղական հումքը և տեղական գյուղատնտեսական արդյունքները մշակող ձեռնարկություններ, որոնցից կախման մեջ էին ընկնում գյուղական արհեստավորները և տնայնագործները։ Գյուղացիության սակավահող կամ հողազուրկ մասը տեղ էր գտնում մասամբ այդ՝ ձեռնարկություններում, իսկ ավելի մեծ չափով և հետզհետե աճող քանակով դիմում էր դեպի քաղաք, մասնավորապես դեպի Բագու, Թիֆլիս և այլն։

Սակայն Անդրկովկասի գաղութային պայմաններում ուժեղ էին ցարիզմի կիսաճորտատիրական-գաղութային ճնշումը, ապա, թեև ամենուրեք ոչ հավասար չափով, կալվածատիրական-կիսաճորտատիրական բնոը և նույն ուղղությամբ ներգործող վաշխառուական կապիտալի կաշկանդիչ լուծը, այդ պատճառով դյուղում տիրապետող էր հանդիսանում պաուպերացման տենդենցը, ապքատացող գյուղացին խճճվում էր երեք կողմից հյուսվող այդ ցանցի մեջ և տեսականորեն մատնված մնում մանր արտադրողի կիսաքաղց վիճակին՝ կերակրելով միայն իր մեծ ու փոքր տերերին։

70—80-ական թվականներին դգալի չափով փոխվում էին նաև Անդրկովկասի քաղաքները։ Բաքուն արդեն խոշոր արդյունաբերական կենտրոն էր դառնում, արդյունաբերական կապիտալը նվաճումներ էր կատարում, թեև շատ ավելի համեստ մասշտաբով, Թիֆլիսում, Բաթումում, հավը քայլերով շարժվում էին նաև Երևանը, Ալեքսանդրոպոլը և մյուս գավառական կենտրոնները։ Երկաթուղին միացնելով Թիֆլիսը Բաքվի և Բաթումի հետ՝ հեշտացնում էր տնտեսական-առևտրական կապերը Ռուսաստանի և Եվրոպայի հետ. ռուսական և արտասահմանյան կապիտալներն ավելի եռանդուն հետաքրքրություն էին հանդես բերում դեպի Անդրկովկասի բնական հարստությունները և գյուղատնտեսության արդյունքները։ Բաքվի նավթարդյունաբերության մեջ գրված նրանց իշխող դիրքը որոշ շարժում էր ստեղծում տեղական կապիտալի, մասնավորապես հայկական կապիտալի ներկայացուցիչների շրջանում։ Արդյունաբերության հարցերը հետաքրքրության առարկա էին դառնում։ Տեղական կապիտալի և դրսի կապիտալների (արտասահմանյան և ռուսական) մրցության և ապագայի հարցն էր հրապարակ իջնում և մտքեր հուզում։

Սրանց զուգընթաց ծագում էին նաև այլ հարցեր։

Քաղաքի և մասնավորապես գյուղի չքավորների հոսանքը դեպի արդյունաբերությունը, դեպի քաղաքները այնպիսի չափերի էր հասնում, Անդրկովկասի պրոլետարիատի առաջին սերնդի հրեշավոր շահագործումը և դժոխային կենցաղային պայմաններն այնքան աղաղակող բնույթ էին ստանում, որ «մշակության» հարցը ծագեց, և հայ բուրժուական մամուլի դանագան օրգաններ դրեցին այդ հարցը և յուրահատուկ լուծման ուղիներ նշեցին։

Գյուղացու, թեկուզ և ժամանակավոր, գալթը քաղաք, ապա մշտական գաղթի փաստերն առաջ էին բերում մեր մամուլում նոր խնդիրներ, նոր ծանր մտահոգություններ։ Ահիթ էին դառնում նրա համար.—խախտվում էր հայության դարավոր հիմքը, գալթում էր հայ գյուղացին, գաղթի պատմական հայտնի պատճառների վրա ավելանում էր նորը՝ տնտեսական զարգացման անհաղթահարելի հարկադրանքը. գյուղացուն իր հարկից հալածում էին ոչ թե նվաճողի կամ վայրագ իշխողի սուրը կամ ավերածությունը, այլ հայի խնդիրը, ապրուստի անհնարին պայմանները։ Այսպիսով հրապարակ էր իջնում գյուղացիական հարցը ոչ միայն սահմանից այն կողմն ապրող ժողովրդի նկատմամբ, այլև սահմանի այս կողմի կյանքի ու դույքի ապահովություն վայելող՝ հայ մասսայի համար։

Հայ տարբեր հասարակական հոսանքների մամուլն աշխուժորեն արձագանքում էր Անդրկովկասի տնտեսական կյանքում տեղի ունեցող բեկումները, կապիտալիստական տնտեսության հաջողությունները քաղաքում

գյուղում նա ոչ միայն նշում էր, այլև դրա առաջիկա զարգացման համար իր ռեցեպտներն էր առաջարկում։ Եվ ինչքան էլ որ մանրամասնություններ-ի մեջ տարբեր էին, ասենք, «Մշակ»-ի կամ «Մեղու»-ի տեսակետները Անդրկովկասի տնտեսական զարգացման կոնկրետ ինդիքների նկատմամբ, նրանց ընդհանուր սկզբունքները նույնն էին. նրանցից ամեն մեկը յուր ձևով ըստ էության պայքարում էր կապիտալիստական հարաբերությունների հաղթանակի համար։ Նույնը կարելի է ասել նաև «Արձագանք»-ի և «Նոր-Դար»-ի համար։

Մեր պահպանողականներին («Մեղու Հայաստանի», «Նոր-Դար»), չափավոր լիբերալներին («Արձագանք») և լիբերալներին («Մշակ») անջատում էին այլ տարաձայնություններ, իսկ տնտեսական հարցերում էական վեճ գոյություն չուներ հայ բուժական իդեոլոգիայի այդ տարբեր օրգանների միջև։ Այս տյնքան ակներև էր, որ անվիճելի էր թվում անգամ այդ ժամանակի, այսինքն 80-ական թվականների սկզբի այն հրապարակախոսներին, որոնք տարբեր աչքով էին նայում կապիտալիզմի զարգացման հեռանկարներին և արդյունքներին Անդրկովկասում։

Այսպես, օրինակ, Տ. Ս.-ն Փարիզից գրած իր թղթակցություններում «Մեղու»-ի մեջ մեզ հետաքրքրող հարցի մասին նկատում էր, թե ինչ վերաբերում է «...Թիֆլիսի լրագիրների նոր, ռեալական ուղղություններ և տնտեսական հոդվածներին, դրանք բոլորն էլ կարծես նույն չափի վերա են ձևված, բոլորն էլ մեկ գրչից կարծես դուրս եկած։ Ըստ Տ. Ս.-ի՝ դրանց «... բոլորի վերջին տնտեսական խոսքը, նշանարանը այս է՝ մեքենաներ, կապիտալ և եկամուտ, եվրոպացիների կամ ռուսների հետ մրցումն»[1]։

Չի կարելի չհամաձայնել «Մեղու»-ի Փարիզի թղթակցի հետ, որչափով որ նրա պնդումը վերաբերում է իր ժամանակի մամուլի ընդհանուր տիրող տոնին, բայց անկարելի է ընդունել նրա այն դիտողությունը, որ ժամանակի հայ մամուլում ամենևին հաշվի չէր առնվում այն հանգամանքը, թե սրբյոր մեքենաների, կապիտալի միջոցով առաջացող տնտեսական զարգացումից «ժողովրդյան ժեծամասնությունը որչափ և ինչպես դոգտվի... և կարող է արդյոք օգտվել. այդ մասին մտածել ոչ ոքի մտքիցն էլ չէ անցնում, թերևս և ոչ էլ հետաքրքրում»[2]։

Ճիշտ է, որ 70—80-ական թվականների հայ մամուլի ինչպես վերևում հիշված օրգանների, այնպես էլ մյուսների գլխավոր մտահոգության առարկան ըստ էության երկրի կապիտալիստական զարգացման շահերն էին, և եթե հաճախ խոսվում ու գրվում էր հայ գյուղացու, հայ ագրոտավորի կամ ուղղակի ժողովրդի մասին, ապա նրա տնտեսական բարեկեցությունն էլ պատկերացվում էր միմիայն փոդային տնտեսության, շուկայական հարաբերությունների զարգացման, գյուղատնտեսական և արդյունաբերական ընկերությունների ստեղծման շրջանակում, որոնք գյուղի և քաղաքի մանր արտադրողներին պիտի հնարավորություն տային պայքարել խոշոր կապիտալիստների դեմ և իրենց տեղն ապահովել ընդհանուր մրցման մեջ։ Տնտեսական ադատ մրցումից դուրս՝ ոչինչ չէր պատկերացվում։ Անդրկովկասի տնտեսական-հասարակական մթնոլորտը բավականաչափ հագեցած էր բուրժուական տենդենցներով, այլ տնտեսական կամ

1 «Մեղու Հայաստանի», 1882 թ., № 69. Տ. Ս.-ի թղթակցությունը Փարիզից։

2 Նույն տեղում

հասարակական իդեալ անկարելի էր թվում մեր մասնի զեկավար գործիչներին Անդրկովկասի, մասնավորապես հայ շրջաններում։

Գրիգոր Արծրունին, այդ շրջանի ամենաազդեցիկ հրապարակախոսը, արտահայտելով իր ժամանակի հայ վերնախավերի սոցիալական տրամադրությունը, ամբողջ հայության անունից հայտարարում էր. «Սոցիալիզմը հակառակ է մեր բնավորության, կամ «մեր բնավորության հակառակ է սոցիալիզմի որևէ գաղափարը...»։

Այս գրվում էր ռուս նարոդնիկների դեմ։

Բայց այս կատեգորիկ պնդումին հակառակ՝ հենց նույնիսկ հայ բուրժուական մասնի էջերում և նույն ժամանակաշրջանում սկսեցին հնչել այլ ձայներ, որոնք, ճիշտ է, բավական թույլ և բավական անվճռական տոնով, տնտեսական ու հասարակական հարցերում արձագանքում էին հենց այն սոցիալիզմի իդեաներին, որից հրաժարվում էր հայ լիբերալիզմի գլուխը, որի թեորիան ու պրակտիկան վճռականապես դատապարտում էր նա վերևում նշված առաջնորդողում։ Խոսքը վերաբերում է ռուսական ուտոպիստական նարոդնիկական սոցիալիզմին, որի իդեաների ազդեցությունն այս կամ այն չափով, ավելի կամ պակաս պարզությամբ երևան է գալիս մեր մամուլում 70-ական թվականների վերջերին և 80-ական թվականների սկզբին, մասնավորապես Ռուսաստանի հայ ուսանողների գրական պրոդուկցիայում։ Դրանցից ոմանք Անդրկովկասի տնտեսական զարգացման կապիտալիստական ընթացք ստանալու խնդիրը քննության են առել հենց այն տեսակետից, որ ակնարկում էր 1882 թ. «Մեղուշ»-ի մեջ նրա Փարիզի թղթակիցը՝ Տ. Ա.-ն, այսինքն ժողովրդի մեծամասնության շահերի տեսանկյունով, և մասավորապես հանգել են այնպիսի հետևությունների, ինչպես հենց Տ. Ա.-ն ինքը։

Այսպիսով, կապիտալիզմի զարգացման առաջին քայլերն Անդրկովկասում ոչ միայն նշվել ու հասարակական գնահատական են ստացել մեր բուրժուական մամուլի տարբեր հոսանքների կողմից ընդհանուր առմամբ համերաշխ տոնով, այլև ուշադրության առարկա են դարձել այն հոսանքների ներկայացուցիչների համար, որոնց սոցիալիստական, կամ նարոդնիկական տրամադրությունները թելադրել են նրանց անխառն զգացմունքով չմոտենալ տնտեսական կյանքի այդ անխուսափելի փաստին և ժողովրդի համար կապիտալիզմի տնտեսական նվաճումների բարիքները ճանաչել որոշ վերապահությամբ և որոշ ուղղություն ստանալու դեպքում միայն։

Անդրկովկասի կապիտալիստական զարգացման հարցերը 70—80-ական թվականների մեր մամուլում համարյա քննության չեն առնված ֆեոդալական-կալվածատիրական խավերի դիրքերից, այնպես որ կարելի է անտեսել այդ հոսանքի տեսակետների պարզարանումը տվյալ խնդրում և գրաղվել միայն վերևում նշված հասարակական հոսանքներով—բուրժուական և նարոդնիկական-սոցիալիստական։

*

Գյուղացիական ռեֆորմից հետո կապիտալիզմի զարգացման տեմպի և ծավալի նկատելի աճումը Ռուսաստանում սկսեց ավելի սերտորեն կապել մետրոպոլիան իր գաղութի՝ Անդրկովկասի հետ։ Ավելին. «Ռուսական կապիտալիզմը...ներգրավում էր Կովկասը համաշխարհային ապրանքային շրջ-

1 «Մեղու», 1879., № 48, Գ. Ա. «Ո՞ւր ենք գնում» առաջնորդողը։

ֆանատության մեջ, համահարթում էր նրա տեղական առանձնահատկությունները— վաղեմի նահապետական փակվածության մնացորդը,—սանձում էր շուկա իր գործարանների համար[1]։

Անդրկովկասի բնական հարստությունները գրավում էին ոչ միայն ռուսական կապիտալիզմի, այլև եվրոպական կապիտալիստական շրջանների ուշադրությունը։ Անդրկովկասյան երկաթուղու հասնելը Սև ծովի ափին 1870-ական թվականների սկզբին ավելի ընդարձակեց տնտեսական արտաքին կապերի հնարավորությունը, օտար կապիտալների մուտքն ավելի մատչելի դարձավ և միաժամանակ ավելի սպառնալի բնույթ սկսեց ընդունել տեղական կապիտալի համար, որ այդ շրջանում համարյա բացառապես հայկական էր և գրեթե լիովին ներքին կամ արտաքին առևտրում զբաղված։ Ռուսական ու եվրոպական կապիտալներն սպառնալիք էին ստեղծում տեղականի համար ոչ այնքան փոխանակության, որքան արտադրության առպարիզում։

Այդ վտանգը պարզ գիտակցում էր անցյալ դարի 70-ական թվականների հայ բուրժուական մամուլը և բավականաչափ անհանգստությամբ անդրադառնում էր դրան, նյութ որոնում, հայ գործարար շրջանների ուշադրությունը հրավիրում դրա վրա, միջոցներ առաջարկում սպառնացող վտանգը կանխելու համար։

Պահպանողական «Մեղու»-ն անգամ այդ մասին գրելիս երևան էր բերում սովորաբար իրեն ոչ հատուկ, կտրուկ շեշտ, բռնում էր ահազանգողի վճռական դիրք, մոռանալով իր խոհեմ չափավորությունը և հավասարակշռությունը։ Անդրկովկասյան երկաթուղու Փոթիին հասնելու փաստը նշելով, «Մեղու»-ն սուր կերպով դնում է հայ կապիտալիստների առաջ եվրոպական կապիտալի մրցության վտանգի հարցը, շեշտում է դրա շնորհիվ ստեղծված սպառնալիքի մեծությունը և կոչ է անում հասկանալ «երկրի ներկա վիճակը», հրաժարվել տնտեսություն վարելու հին եղանակներից և վաճառականության, գյուղատնտեսության ու արդյունաբերության կազմակերպումն առաջ տանել գիտության պահանջների համեմատ, եթե ոչ՝ «անտարակույս, մեր սայրը շուռ կգա»։

«Մենք պետք է լինինք այն գիտնականները, որ երկրի մեջ ծածկած գանձերը երևան հանենք, մենք պետք է լինինք այն ճարպիկ մշակները, որ մշակենք նրանց, մենք պետք է լինինք այն ճարտար՝ արվեստավորները, որ մերերի ամենանուրբ ճաշակին վերաբերյալ պիտույքները պատրաստենք, մենք պետք է լինինք այն արիասիրտ վաճառականները, որոնք աներկյուղությամբ աշխարհներ են չափում, մենք պետք է լինինք այն երկրագործները, որոնք այնպես պետք է պտղաբերենք մեր երկիրը, որ ստարներին էլ կերակրենք մեր աշխատանքի պտուղներով»[1]։

«Մեղու»-ն ապա ուշադրություն է հրավիրում մի կոնկրետ փաստի վրա, նշում է, որ Թիֆլիսից ոչ շատ հեռու գտնվող Զաթախի երկաթի գործարանն արդեն անգլիացիք գնել են. «Զաթախի երկաթի հանքը եղավ առաջին գոհը մեր սառնասրտության և անհոգության դեպի մեր բարիքը»։ Պետք է շտապել, եթե ոչ առևտրից ստացվող եկամուտն էլ ձեռքից կգնա.

---

1 *Ленин*, Соч., т. III, Развитие капитализма в России, стр. 464.

1 «Մեղու Հայաստանի», 1873 թ., № 36-ի առաջնորդող։

«Հասել է այդ ժամանակը, հարուստներ, ալթուն կացեք»,—նախազգուշացնում է նա[1]։

Տարիներ հետո, երբ 1880-ական թվականների սկզբներին արդեն համարյա պատրաստ էր Անդրկովկասյան երկաթուղու Իաքու—Իաթում դիծը, երբ ռուսական և արտասահմանյան կապիտալներն արդեն դդալի նվաճումներ էին կատարել Անդրկովկասի արդյունաբերության, մասնավորապես Իաքվի նավթարդյունաբերության մեջ.—«Մեղու»-ն դարձյալ անդրադառնում է իր հարուցած հին հարցերին, այս անդամ իր գլխավոր աշխատակցի և «Նոր-Դար»-ի ապագա խմբագրի՝ Սպանդար Սպանդարյանի միջոցով։

«Մեր երկիրը բավականապես տնտեսական հեղափոխության է դիմում. հարկավոր է, որ Կովկասի բնակիչներն ի նկատի առնեն երկրի ուժը, տնտեսական վիճակը, պայմանները և այն փոփոխությունները, որոնց պետք է դրանք ենթարկվեն»,—գրում է Սպանդարյանը, աչքի առաջ ունենալով Անդրկովկասի տնտեսական զարգացման բռնած ընթացքը։ Իսկ երկրի ներկա տնտեսական դրությունը նա բնութագրում է այսպես. «...Կովկասը առայժմս հում նյութեր վաճառահանող երկիր է»։

Բայց դրանով արդեն զոհանալ անկարելի է։ Երկրի ապագան ապահովել կարելի է միայն այն ժամանակ, երբ սկսվի հողի ընդերքի և հողի արդյունքի գործարանային մշակությունը. «Լոկ վաճառականությունով, մանավանդ այսուհետև շատ բան չենք շինիլ հայերը և կունենան ավելի հզոր և ավելի զորավոր մրցողներ. թող հողերին տիրապետեն, թող հողերը մշակեն, աշխատանքի սովորեն, հում բերքերը կանոնավոր մշակեն, աղնվացնեն և այդպիսով արհեստների համար դուռ բաց անեն...»։

Իսկ ինչու հնարավոր չէ եղել այդ բոլորն անել մինչև այժմ, ինչու այժմ էլ դժվարությունները դեռ վերացած չեն այդ ասպարեզում։ «Մեղուն» փորձում է այդ հարցերի պատասխանը գտնել, ապա նաև նշել միջոցառումներ քաղաքի և գյուղի արդյունաբերությունը զարգացնելու համար։

Այսպես, օրինակ, ըստ Սպ. Սպանդարյանի՝ Անդրկովկասում գործարաններ չեն բացվում, որովհետև հայ առևտրականները «...իբրև տղրուկ ծծում են մեր երկրի արյունը, և մեկ իտացեք, թե ում համար—մի քանի տասնյակ ռուս գործարանատերերի համար, որոնք փափուկ նստած՝ վայելում են մեր երկրի հարստությունները առանց աշխատանքի։ Այդ կատարվում է հետևյալ ձևով.—Թիֆլիսի «ամրոց» Իազասխանայի, Թատուշյան քարվանսարայի և Միջին փողոցի առևտրականները դրանց սարուկներն են, որոնք ամենայն եռանդով պետք է ծծեն մեր երկրի հարստությունը և տանեն տան այդ գործարանատերերին՝ քանդելով թե երկիրը և և թե իրենց[3]։

Ուրիշ խոսքով՝ հայ առևտրականը, ըստ Սպ. Սպանդարյանի, Անդրկովկասի հայկական առևտրական կապիտալի այն ժամանակի ամենակարևոր կենտրոններից մեկում—Թիֆլիսում արդեն դարձել է մետրոպոլիայի արդյու-

---

1 Նույն անդում, «ներքին» բաժնում.

2 «Մեղու Հայաստանի», 1882 թ., № 38, Սպ. Սպանդարյան, «Բաքու-Թիֆլիսյան երկաթուղագծի նշանակությունը» առաջնորդող։

3 «Մեղու Հայաստանի», 1882, թ. № 127, Սպ. Սպանդարյան, «Հայերի հակընկերական հակումը» առաջնորդող։

նարերական կապիտալի գաղութային սոսկական գործակալը։ Իսկ մետրոպոլիայի, Ռուսաստանի կապիտալիստների մտադրություններն Անդրկովկասի նկատմամբ հայտնի են. «Այդ անչափ հարստացած գործարանատերերը նայում են մեր երկրի և նրա բնակիչների վերա, ինչպես իրենց հարստանալու միջոցի վրա։ Այդ ցույց և տալիս և տրանզիտի խնդրում դրանց բռնած դիրքը»[1]։

Այս վերջին խնդիրը Սպ. Սպանդարյանը հատուկ քննության է առել «Մեղու»-ի մեջ, ցույց տալով, թե ինչպես հենց «այդ անչափ հարստացած գործարանատերերից» շատերին ղոհ են բերվում Անդրկովկասի, առաջին հերթին հայ վաճառականների կենսական շահերը, որովհետև, նշում է նա, կառավարական շրջաններում «ժամադրություն կա տրանզիտը կամ բոլորովին ոչնչացնել Կովկասում, կամ, ինչպես մյուս ապրանքները, մաքսի ենթարկել», իսկ, իհարկե, կարիք չկա «բացատրել տրանզիտի խափանումից առաջացած վնասները Կովկասի համար»։ Սակայն «տրանզիտի խափանումը» անհրաժեշտ է ռուսական կապիտալիզմի համար Մերձավոր Արևելքի շուկաներում հաստատվելու նպատակով և այդ կիրառվեցավ, որովհետև «...ինչ նշանակություն ունեին Կովկասի առևտրական շահերը ամբողջ պետության արդյունագործության առաջ։ Ռուս գործարանատերերը երկյուղ են կրում արևելքում, Ասիայում եվրոպական գործարաններից արտադրած ապրանքների մրցումից»[2]։

Այսպիսով, հայ առևտրական կապիտալի համար պատրաստվում էր մի դժալի հարված։ Բայց այդ էլ բավական չէր։ Հենց նույն Արևմուտքի կապիտալը, որի դեմ Արևելքի շուկաներում պայքար էր մղում ռուսականը, ի սպաս դնելով իր շահերին ցարիզմի տնտեսական պրոտեկցիոնիստական քաղաքականությունը և Անդրկովկասի վրա էլ տարածել տալով այն,—ռուսական կապիտալից պակաս նվաճումներ չուներ այդ ժամանակ Անդրկովկասի արդյունաբերության կարևորագույն ճյուղում—Նավթարդյունաբերության մեջ։ Բաքվից արդեն լսվում էին հայ կապիտալիստների[3] հուսահատ ձիչերը, և Սպ. Սպանդարյանը փրկության մի միջոց գիտեր, որի վրա հրավիրում էր մասնավորապես Բաքվի հայ կապիտալիստների ուշադրությունը, այն է՝ հրաժարվել հայի պատժական «հակաընկերական հակումից», այլապես կարելի է կորստի մատնվել. «Բաքվի հայ պատվելի գործարանատերերը պետք է հասկանան և գործ դնեն ընկերաբար գործելու սկզբունքը։ Դրա դեմ գնալը էլի ներելի էր, երբ իրենք իրենց մեջը միմյանց հետ լինեին մրցում, բայց երբ օտար կապիտալներ, երբ օտար դրամատերեր և ընկերություններ իրենց հետ մրցման մեջ են մտնում, անտարբեր մնալ—այդ անմտասպանություն է»[4]։

Հայ կապիտալիստների ընկերություններ կազմելու միտքը նոր չէր և եռանդուն կերպով քննվում էր այդ ժամանակի հայ մամուլում։ Ոչ միայն մամուլը, այլև գործարար շրջանների ներկայացուցիչները հրապարակային քննության հարց էին դարձնում այն, թե ինչն էր դրդում հայ կապիտա-

---

1 Նույն տեղում։

2 «Մեղու Հայաստանի», 1882 թ., № 122, Սպ. Սպանդարյան, «Կովկասյան տրանզիտի խնդիրը» առաջնորդող։

3 «Մեղու Հայաստանի», 1882 թ., № 127, Սպ. Սպանդարյան, «Հայերի հակաընկերական հակումը» առաջնորդող։

լիսանների առանձին ներկայացուցիչներին մամուլի միջոցով էլ դիմել իրենց «արհեստակից եղբայրներին», երևում է «Մեղու»-ի Բաքվի թղթակից Զամփազամփի հոդվածից, որը և Սպանդարյանին առիթ էր ավել վերևում բերած խորհրդածություններն անելու։

Նոբելը, Պետրով և Պավլով եղբայրների, հրեա Դեմբոի և Կաղանի ֆիրմաներն ամեն ինչ իրենց ձեռքն են հավաքել Բաքվում և «այսօր 2—3 միլիոն ռ. առևտուրի շրջանում լողում են ադամ ու համարձակ»,—գրում է Զամփազամփը։ Իսկ վաղը, երբ կբացվի Բաքու—Թիֆլիս երկաթուղին, այն ժամանակ «...մի կողմից՝ Նոբելը, մյուս կողմից՝ հիշատակված «ֆիրմաները», երրորդ կողմից՝ ֆրանսիական ընկերությունը (որ շուտով կսկսվի) կշարադասեն իրանց հաղարներով կերասինակրակաոքերը երկաթուղու վրա, այն ժամանակ մեր վերջի կաշիրը դաբրաղիանաներում կքերթեն և մեր անշնչացած դիակները «Կըրկըժան» (Քարքեջահան) դյուղի ձորերը կգլորեն»։

Ահա այսպիսի չարագուշակ հեռանկարն է, որ նրան հարկադրել էր հրապարակ գալ, քանի դեռ ուշ չէ, այսպիսի առաջարկով՝ ուղղված Բաքվի ավելի քան 250 հայ նավթագործարանների տերերին կամ, իր բառերով ասած՝ «մեր արհեստակից եղբայրներին». «Միացվեցեք, խորհեցեք, խումբ-խումբ ընկերություններ կազմեցեք. եթե բոլորս ի միասին անհնարին կլինի, գոնյա 25—30 գործարանատերերս միանանք...»[1]։

Այսպես ուրեմն, «Մեղու»-ն առիթ բաց չէր թողնում հայ կապիտալիստների ուշադրությունը կենտրոնացնելու այն հետևանքների վրա, որ առաջ են գալու Անդրկովկասում երկաթուղու շնորհիվ, այն հնարավորությունների շնորհիվ, որ երկաթուղին ստեղծում է Արևմուտքի և Ռուսաստանի անհամեմատ հզոր կապիտալիստների համար։ Ոչ միայն ձեռքից գնում են երկրի հարստությունները, դրսի արդյունաբերողները տիրում են մեր երկրին, ստրկացնում և-իրենց շահերին են ծառայեցնում տեղական առևտրական կապիտալի ներկայացուցիչներին, նրանց համար կորուստ են պատրաստում արդյունաբերության ասպարեզում, այլև սպառնալիք են ստեղծում նրանց առևտրական շահույթի հնարավորության համար։

Հայկական կապիտալն Անդրկովկասում իր դիրքերը կարող է պահել, եթե նոր ստեղծված պայմաններում՝ առևտրի ասպարեզից անցնի նաև արդյունաբերության ոլորտը, սկսի ինքը մշակել իր երկրի հարստությունները և որպեսզի կարողանա դիմադրել դրսից սպառնացող վտանգին, պիտի անհապաղ միավորի իր ցաքուցրիվ ուժերը, հանդես գա կազմակերպված ձևով և կապիտալիստական մեծ ընկերություններով։

Պատահական չէ նաև այն հանգամանքը, որ «Մեղու»-ն հիշյալ հարցերին անդրադառնում էր 1860-ական թվականների վերջի և 1870-ական թվականների սկզբի, ապա 1870-ական թվականների վերջի և 1880-ական թվականների սկզբի արդյունաբերական վերելքի տարիներին։ Կապիտալիզմի ուղին մտած հետռեֆորմյան Ռուսաստանի տնտեսական կապերն սկսում էին ուժեղանալ իր գաղութների հետ, մետրոպոլիայում տեղի ունեցող պրոցեսները կապիտալիստական տնտեսության դրկում և դրա հետ կապված հասարակական տրամադրություններն այս կամ այն ձևով, այս կամ այն

[1] «Մեղու Հայաստանի», 1882 թ., № 126, Զամփազամփ, «Նավթային հարցի առիթով»։

չափով արձագանք էին գտնում գաղութներում և տեղական պայմանների համեմատ այս կամ այն արտահայտությունն էին ստանում հասարակության դասային շերտերում։ Այս բանում ավելի համոզվելու առիթ մենք կունենանք մի քիչ հետո, երբ կքննենք «Մեղու»-ի հոդի արամադրություններն Անդրկովկասի անտեսական ապագայի մասին 1880-ական թվականների կեսերի տնտեսական կրիզիսի շրջանում։ Իսկ այժմ անցնենք այն հարցին, թե ինչպես էր ծրագրում «Մեղու»-ն բարձրացնել հայ գյուղացու տնտեսությունը դարձյալ այն ժամանակաշրջանում, որի մասին խոսեցինք վերևում միայն արդյունաբերության հարցերի կապակցությամբ։

*

Հայ գյուղացու անտեսական դրությունը շատ անմխիթարական է և դրա պատճառները, ըստ «Մեղու»-ի, հետևյալներն են. նախ՝ անկատար է մեր գյուղացու արտադրության եղանակը, ապա՝ նրան կործանում է վաշխառուն։

Առաջինի վերացման համար «Մեղու»-ն նշում է այսպիսի բնորոշ ուղի. «...շինական տնտեսության կատարելագործությունը կարող է առաջ գնալ միայն մրցությամբ։ Այդ մրցությունը միայն պետք է արտահայտվի իրանց գյուղացիների մեջ։ Հետո այդ մասին այսպիսի բացատրություն է տրվում. «Այս իրողությունը ճանաչված է Եվրոպայում և Ռուսաստանում և մեծ արդասիք է ցույց ավել այդ տեղերում։ Այսպես ուրեմն, անգամ պահպանողական «Մեղու»-ն գյուղի նահապետական հարաբերությունների իդիլիայի մասին խոսելն անկարելի է համարում և նրա զարգացման ուղին տեսնում է այն ուղղությամբ, որով ընթացել է եվրոպական և ռուսական գյուղը։ Հատկապես բնորոշ է առաջինի հիշատակումը, որովհետև ռուսական գյուղի կապիտալիստական զարգացման ուղու վրա կանգնելը 70-ական թվականների սկզբին («Մեղու»-ի առաջարկությունը վերաբերում է 1874 թ. սկզբին) նոր միայն ընթացք էր ստանում։

Տնտեսական մրցությունը գյուղում հենց գյուղացիների միջև ծավալելու համար՝ «Մեղու»-ն այսպիսի առաջարկ է անում. «Յուրաքանչյուր տարի մի կամ երկու անգամ պետք է կազմվի գավառական շինական արտադրության հանդես, որին պետք է մասնակցեն գյուղացիները յուրյանց զանազան տնտեսական արտադրությամբ։ Իսկ «ամենակատարելագործված արտադրության համար» պետք է սահմանել պարգևներ, որոնց համար անհրաժեշտ դումարը կարելի է հավաքել գյուղացիներից, միայն առաջի տարին գործը հունի մեջ դնելու համար՝ մի որոշ գումար պիտի հատկացնի Գովկասի Գյուղատնտեսական Ընկերությունը։

Այս «անտարակույս շատ արդյունավոր» գործի իրականացման վրա «Մեղուն»-ն հրավիրում է «թե գյուղական վարչությանց, թե գավառապետների, թե նշանավոր հողատերերի և թե մանավանդ տեղվույս Գյուղատնտեսական Ընկերության ուշադրությունը»[1]։

Գյուղացու տնտեսական վատթար դրության երկրորդ պատճառը՝ վաշխառությունը հաղթահարելու համար «Մեղու»-ն մի այլ համադարման գիտե, այդ գյուղական բանկերի հիմնումն է։ Հայ ժողովրդին լուսավորչական եկեղեցու հովանու տակ պահելու համար անխոնջ կերպով մաքառող

1 «Մեղու Հայաստանի», 1874 թ., № 2, «Ներքին» բաժնի խմբագրական հոդվածը։

«Մեղու»-ի համար շատ բնորոշ է, որ այդ բանկերի հիմնման նախաձեռնությունը կապվում է Էջմիածնի վանքի հետ։

«Մեղու»-ի Երևանի թղթակիցը գնում է բանկ բանալու անհրաժեշտության հարցը «Արարատյան գավառում», նրա «կենտրոնում գտանված գյուղերից մինի մեջ», որով «մենք փրկած կլինինք մի ժրաջան ժողովուրդ և տված կլինինք նորան ույժ յուր վաստակը և արդյունաբերությունն ընդարձակելու և մշակյալ դրության դարձնելու», փրկվելու «հարստահարող» պարոններից։ Թղթակիցը չի կասկածում, որ «եթե առաջին գտրկը տվեց նա (Էջմիածնի վանքը։ Վ. Ռ.) այս գործին», այնուհետև «մեր հարուստ հայ դրամատերերը, օրենսգետները, մինչև անգամ գյուղացիներն ևս կոգնեն այդ գործին...»[1]։

Այդ թղթակցության առթիվ անդրադառնալով գյուղական բանկերի հարցին, «Մեղու»-ն այսպես է գնահատում դրանց նշանակությունն ընդհանրապես գյուղացիության համար. «Կարելի է ասել, որ ինչպես ստրկության ջնջումն (ճորտերի ազատագրումը։ Վ. Ռ.) անհատներին ազատություն տվեց բարոյապես, այսպես էլ այդ բանկերի հիմնարկությունը տնտեսական և նյութական ազատություն կտան գյուղացվոց»։

Բանկերի հիմնման նախաձեռնության հարցին դառնալով, «Մեղու»-ն այսպիսի դատողություններ է անում.—մեր թղթակիցն Էջմիածնի վանքին է առաջարկում բանկի սկիզբը դնել, «իսկ մենք դարձնում ենք նորա վերա և ուշադրությունն ամեն հարուստ բարեմիտ հայի, որ կարող է հիշյալ բանկի սկզբնավորության պատճառ դառնալով. թե յուր շահերին կանոնավորապես ծառայել և թե խեղճ գյուղացվոց բարօրության պատճառ լինելով, նոցա երախտագիտության արժանանալ, նոցա ապագա սերունդը դառն վիճակից ազատելով»[2]։

Ուրեմն ոչ միայն Էջմիածինը կարող է փրկիչ հանդիսանալ «խեղճ գյուղացվոց», այլև Էջմիածնի հոտի ամեն ունևոր անգամ կամ «ամեն հարուստ բարեմիտ հայ»։

Այսպիսով, ըստ «Մեղու»-ի, դուրս է գալիս, որ ճորտերի ազատագրումը կամ գյուղացիական ռեֆորմն իբր թե միայն բարոյապես ազատեց անհատին, այդ էր նրա էական. բնորոշ կողմը, իսկ գյուղական բանկերը իբր թե պիտի տնտեսական ազատություն բերեն գյուղացուն, նրան փրկելով վաշխառուից, և այդ փրկիչներն էլ բանկ հիմնող հայ կապիտալիստներն են լինելու, որոնց շահը և գյուղացու տնտեսական բարօրությունը ներդաշնակ ամբողջություն են կազմում։

Ուշադրության արժանի է նաև այն, որ «Մեղուն»-ն երբեք գյուղացիական ռեֆորմի հարցով ըստ էության չի զբաղվել, բավականանալով միայն նրա բուրժուական բովանդակության և քաղաքական նշանակության ընդհանուր դրական գնահատականը տալով։ Կալվածատերերի և գյուղացության փոխհարաբերությունների հարցը կամ, ավելի ճիշտ, ֆեոդալական-ճորտատիրական հարաբերությունների հարցն Անդրկովկասում, կամ գոնե նրա հայկական շրջաններում, ամբողջ ռեֆորմի էպոխայում «Մեղու»-ի հետաքրքրության շրջանակից դուրս մնաց։

---

[1] «Մեղու Հայաստանի», 1874 թ., № 31, Միխայել Աբանոյանց. «Բանկ բանալու հարկավորությունը Արարատյան գավառում»։

[2] «Մեղու Հայաստանի», 1874 թ., № 35-ի առաջնորդող։

Նույնպիսի անտարբերությամբ է վերաբերվել «Մեղուն» նաև գյուղացիական ռեֆորմի արդյունքների հարցին Անդրկովկասում։ Ֆեոդալական-ճորտատիրական հարաբերությունների մնացորդները նրան համարյա չեն զբաղեցնում նույնիսկ այն դեպքերում, երբ նա քննության է տանում գյուղացու տնտեսական ծանր դրությունը, նրա տնտեսվարության անդրջրհեղեղյան եղանակները և միջոցներ է առաջարկում նրա տնտեսությունը բարձրացնելու համար։ Կալվածատերն իբրև գյուղացու հիմնական շահագործող՝ ասես գոյություն չունի «Մեղու»-ի համար։

«Մեղու»-ի վերևում քննության առած բոլոր դատողություններից ու ծրագրերից մի բան անկասկածելի է, որ նա գյուղի բուրժուական զարգացման համար է պայքարում, որովհետև գյուղում մրցությամբ իր տնտեսությունը կարող էր կատարելագործել միայն ունևորը, որովհետև գյուղական բանկը վաշխառուից գյուղը փրկելով՝ դարձյալ հող էր պատրաստելու ունևոր գյուղացու համար գյուղական ձեռնարկատեր դառնալու։ և այդպիսով «խեղճ գյուղացվոց», նրանց «ապագա սերնդի» համար, ըստ «Մեղու»-ի ծրագրերի, միայն մի բան կփոխվեր գյուղում, այն է՝ ֆեոդալական կամ կիսաֆեոդալական, ապա վաշխառուական շահագործմանը հետզհետե վերջնականապես կփոխարիներ բուրժուականը, կապիտալիստականը։

*

Թե ինչպես էին հանդես գալիս շահագործման այդ երկու ձևը Անդրկովկասի այլ գյուղերում, ինչ ազդեցություն էին ունենում հայ չքավոր գյուղացու տնտեսության վրա և ինչ հետևանքներ առաջացնում նրա համար,—այդ մասին կարելի է դատել հենց «Մեղու»-ի հաղորդած տեղեկությունների հիման վրա։ Ահա մի քանի օրինակ։

«Մեղու»-ի Կողբ գյուղի թղթակիցը 1881 թվին գրում է.—հայ գյուղում «չեն անհետացել, կործանվել նույնիսկ ժողովրդասպան անգութ բռնակալները», որոնք «ստրկացնում են նույնիսկ ժողովուրդը և տգրուկի նման ծծում, սպառում են նոցա արյունը»։ Այս «ներածականից» հետո՝ նա պատմում է իրեն ծանոթ փաստերի մասին. «Այս վիճակի մեջն է նաև Կողբ գյուղի մոտակ ժողովուրդը, չէ վերացել նորա վրայից բռնակալների ձեռքը։ ...Ազատ են սուզ ու ողբից միայն հրեք-չորս տներ, որոնք պատճառ են ժողովրդի թշվառության»։

Ապա նա խոսում է այն բռնությունների մասին, որոնց ենթարկված է Կողբի ժողովուրդը և որոնց նմանը «նույնիսկ Հայաստանի (Արևմտյան Հայաստանի։ Վ. Ի.) խորքերումն չեն կատարում վայրենի ու անհաշտ քյուրդերն»։

Ահա «Կողբ գյուղի բռնակալների» անսանձ վաշխառության մի պատկեր. «...պատահում է, որ խեղճ գյուղացին 4-5 օրավար հաց ունի, կալի ժամանակ հպիվ քառորդ կամ կես օրավար հայ է մնում իրան,—բոլորը հավիտենական բռնակալ պարտատերն է տանում»[1]։

Նույն թվականին «Մեղու»-ի Շուլավերի թղթակիցը գյուղացիների տառապանքները վաշխառուների ձեռքին հետևյալ ձևով է արտահայտում. «Թուրքի դաշտաղները Իորչալուն են քանդում, մեծատուն մարդիկը Շուլավերի պես մեծ հայաբնակ գյուղը...»։

[1] «Մեղու Հայաստանի», 1881 թ.· № 234, Իլուզանդ Կազրացի, «Կողբ» թղթակցություն։

Բերելով «զորեղ, մեծատուն և ազնիվ» (ազնվական՝ Վ. Ս.) մարդկանց այլանդակ չարարկությունների մի շարք օրինակներ, անձար թղթակիցն անօգնական հուսահատությամբ հարցնում է. «Այսպես անապահովություն կլինի՞, որ ներկայումս լինում է...»[1].

Այս և նման պատճառների ճնշման տակ գյուղացին բռնում էր քաղաքի ուղին, իսկ «Մեղու»-ի ղեկավար հրապարակախոսներից մեկը՝ Սպ. Սպանդարյանը գյուղացու քաղաք գնալու պատճառը որոնում էր ընդհանրապես հային հատուկ «առևտրական ոգու», «հեշտ հարստանալու ոգու» մեջ և դրա առաջն առնելու համար կարծում էր, որ «պետք է ամեն միջոց գործ գնել դրա գլխավոր շարժառիթը ոչնչացնելու, այսինքն առևտրական ոգին»։

Սպ. Սպանդարյանը, իհարկե, շփոթում էր երկու բոլորովին տարբեր բան՝ ունևոր գյուղացու ձգտումը դեպի քաղաք առետրի, դրամական հարաբերությունների, կապիտալիստական տնտեսության տարբերի զարգացման կապակցությամբ և հենց այդ բոլորի շնորհիվ քայքայվող, աղքատացող գյուղացու ակամա չուն դեպի քաղաք՝ ժամանակավոր կամ մշտական աշխատանքի համար։ Թեև տարբեր պատճառներով, բայց գյուղի այդ երկու շերտի համար էլ հավասարապես անիրագործելի էր նրա ցանկությունը, որ հայ գյուղացիք հին նահապետական կարգով «ամենքը համեստ իրենց հայրենիքում ապրեին և պարապեին ազնիվ պարապմունքով—երկրագործությամբ»[2].

Այլ գավառների շարքում այդ անկարելի էր դարձել մասնավորապես Զանգեզուրում, որտեղից քիչ չէր քաղաք աշխատանքի գնացող գյուղացիների թիվը. այդ երևույթը գիտում է «Մեղու»-ի Զանգեզուրի թղթակիցը, բայց չըմբռնելով դրա տնտեսական բարդ պատճառները, «ճռում է շվարած մեր գյուղացոց տգիտության վերա, որոնք թողած այս բնության առատ գեղեցիկ տեղերը, հեռանում են Կովկասի այլևայլ կողմերը, մանավանդ Բաքու, Լուբա և Դարբանդ քաղաքներն, որոնց վերա և շատ թանգ է նըստում այդ տգիտությունը. երկար տարիներ մաշելով իրենց կյանքը Բաքվի նավթային գործարանների մեջ, ...դառնում են իրենց երկիրը կմախք դարձած»[3].

«Մեղու»-ի մեջ կարելի է գտնել այդ գործարաններում աշխատող գյուղացի բանվորների սարսափելի կյանքի վառ նկարագրություններ։ Հատկապես ապշեցուցիչ է պատկերը Բաքվում. «Մեր գործարանների մշակները (թե գրատներ կոչեմ) եկած են հեռու Արցախի և Զանգեզուրի գավառներից... և Պարսկաստանից»,—գրում է «Մեղու»-ի Բաքվի թղթակիցը 1883 թ.։

Նրանք ստանում են «օրական 30—45 կ. կամ ամսական 10—12 ռ.», իսկ հաճախ աշխատում են «ամբողջ օրը, տիվ ու գիշեր». աղաների «հաճախակի բուռն հիյոցները», ապա «դառն ապտակ ու գավազանի հարվածները» առատորեն տեղում են նրանց վրա։ Աղաները բանվորի վրա նայում են իբրև անասունի. «Մենք, պարզն խոստովանվենք, այդ մերկանդամներին նայում ու խնայում ենք այնպես, ինչպես մի քարասիրտ կալ կալող ռանչ-

[1] «Մեղու Հայաստանի», 1881 թ., № 255, XXX-ի «Շուլավեր» թղթակցությունը։

[2] «Մեղու Հայաստանի», 1881 թ., № 234, Ս. Սպանդարյան, «Հայերի մեջ գաղթականության ոգին»։

[3] «Մեղու Հայաստանի», 1881 թ., № 265, Իսայ-Վ.եղիի «Զանգեզուր» թղթակցությունը։

պար հոգում է օրահաշիվ վարձած գրաստյաց հաստար։ (Ախր փող ենք վճարում, փող, ինչու հանգստանան. Վանիի եղը սատկի, Թյունիի ձին սաղ լինի)»։

Գյուղից իրեն մարդ եկած և քաղաքում գրաստի վիճակի մատնված գյուղացի բանվորի վախճանը դժվար չէ գուշակել.—Նա ուժասպառ ընկնում է փողոց կամ «գլորվում է այս և այն գործարանի գյուլխաններում (վառարանների շուրջը), վաթան վայ հառաչելով»[1]։

Իսկ այն բանվորները, որոնք դեռ ի վիճակի են շարունակելու գրաստի դերը, զրկված են անգամ մարդկային սովորական կերպարանքից. անցնելով Մև քաղաքի գործարանների մոտով, կամ փողոցներով՝ «դուք հեռվից կնկատեք մեր մշակներին և կկարծեք, թե նրանք ցնցոտիի կույտեր են, կամ ածուխի դիզված տոպրակներ,—պատմում է «Մեղու»-ի նույն թղթակիցը։—Դուք հեռվից կլսեք սիրտ-հալումաշող շատ ձայներ»։ Պատճառը դժվար չէ պարզել, բանվորներից շատերը հաշվետուր չունեն, «մինչև անգամ շատերը չգիտեն, թե ինչ է հաշվետուրը», դրա շնորհիվ զանազան պատրվակներով հեշտանում են ամեն տեսակի զեղծումներ և չարաշահումներ գործարանատերերի կողմից, կամ ինչպես նրանք են ասում՝ «խագեինը հախներս (վարձ) տամ չի», «հախներս կտրում ա», «մեր իրա բոֆտան (ստվեր) ա գցում», այսինքն մեղադրում է գողության և այլ հանցանքների մեջ և իր «ֆասոն» դիմաց՝ աշխատավարձը պահում։

Պատուհաս է դառնում բանվորների գլխին նաև «գործարանի գլխավոր մշակը», որին «խագեինը» նվիրել է 6—7 ռուբլիանոց մի ժամացույց, որովհետև «կաշառ կուրացուցանէ զաչս դատավորի», և նա արդեն «ազայի երդվյալ փաստաբանն է հանդիսանում»[2]։

Բայց «Մեղու»-ից կարելի է իմանալ նաև մի այլ բան, այն, որ նույն Ղարաբաղի գյուղացին ոչ միայն հեռավոր քաղաքում է ընկնում կապիտալիստական շահագործման դաժան մամուլի տակ, այլև նույնիսկ իր գավառում ու գյուղում. կապիտալիզմը ճանապարհ է սկսում հարթել իր համար դեպի գյուղ, և կապիտալիստական շահագործումը գյուղացուն իր ոլորտի մեջ է սկսում գրավել հենց նրա դռան շեմքին։

Այսպես, օրինակ, 1885 թ. Ղարաբաղի գյուղերի և Շուշու միտաքսի գործարաններում, ըստ «Մեղու»-ի մի այլ թղթակցի տվյալների, «բանվորների թիվը 2.300 հոգու է հասնում»։ Եվ այդ դեռ այն շրջանում, երբ «Ղարաբաղի միտաքսը այլևս արտասահման չի գնում», և «մեր երկրի միտաքսին վաճառահանման միակ հրապարակ այժմ Մոսկվան է մնում, այն ևս 40% ֆասոով»։ Իրա շնորհիվ Շուշում փակվել են Ավշարյանցի և Մնացականյանցի միտաքսի գործարանները, գործում է Ս. Ներսիսյանի 1870 թ. հիմնված գործարանը, որի բանվորները «...գրեթե բոլորն էլ կնանիք են և մանկտիք, թվով 24 հոգիք, ոռճիկ՝ օրենը 30 և 20 կ.»։ Ավելի շատ են գործարանները գավառում, որտեղ «...բանում են պ. պ. Ահարոնյանցի, Ճգնավորյանցի, Զորբարյանի, Թամիրյանի և Օհանյանի գործարանները, թեև դարձյալ առանց էական վաստակի...»[3]։

[1] «Մեղու Հայաստանի», 1883 թ., № 103, Ակնհ. Նաղարյանց, «Մեր գործարանի մշակների առիթով»։

[2] «Մեղու Հայաստանի», 1884 թ., № 96, Ակնհ. Նաղարյանց, «Մեր գործարանների մշակների առիթով»։

[3] «Մեղու Հայաստանի», 1885 թ., № 49, Հայկունի, «Ուղեգնացական ակնարկներ»։

Զմոռանանք, որ տեղեկությունները վերաբերում են 80-ական թվականների արդյունաբերական կրիզիսի տարիներին, և թղթակցի դիտողությունները գործարանների փակվելու, «ցնցումով» կամ «առանց էական վատակի» աշխատելու վերաբերյալ դրա արձագանքն են։

Կապիտալիստական գործարանը գյուղացուն իր ազդեցության շրջանակն է քաշում, հաճախ դեռ չկտրելով նրան իր մանր արդյունաբերությունից, այլ նրա տնտեսական առերևույթ անկախությանը չդիպչելով, նրան դարձնում է իր կցանը. այդպիսի գյուղացու կապիտալիստական շահագործման սաստկությունը շատ դեպքերում նույնիսկ ավելի է, քան գործարան քաշված բանվորինը։

Այսպիսի երևույթ նկատելի է արդեն դարձյալ նույն Ղարաբաղի գյուղերում. «Վերջին տարիներս,—գրում է 1884 թ. «Մեղու»-ին նրա թղթակիցը Շուշուց,—Շելլու Թրքաբնակ գյուղում և Ադդամի—բազարի մոտ շինվեցան մի քանի սպիրտի գավոդներ, որոնց վերա գյուղացին շատ ձեռնտու գնով վաճառում էր այդու բերքը, այսինքն թութը և խաղողը. թթի փութը 35—40 կ., իսկ խաղողինը—40—50 կոպեկով։ Բայց նույն հոդվածից պարզվում է, որ այդ գործարաններին գյուղացիների բերքի «ձեռնտու գնով» վաճառելն արդեն անցյալին է վերաբերում, որովհետև «... ակցիզի այս նոր օրենքը, որով յուրաքանչյուր աստիճանին (գրադուսին) երեք կոպեկ ավելանում է, գյուղացու գրությունը ծանրացրեց ...»։ Պետական անուղղակի հարկի ավելացումն այն հետևանքն ունեցավ, որ սպիրտի գործարանատերերը գյուղացու բերքի կինը պակասեցրին $1\frac{1}{2}$—2 անգամ. խաղողի փութն «այժմ գավոդատերը ուզում է 15—20 կոպեկով»։

Պետության և գործարանատիրոջ գյուղացու հաշվին արած այդ գործարքից շփոթված՝ թղթակիցը վերջացնում է այսպես. «Հիմի այստեղ հարց է դարձնում. թե ինչպես պետք է արած, որ գյուղացու ապրուստի աղբյուրը չի կտրվի, նրա գոյությունը պահպանվի»[1]։

Նույն թղթակիցը հետևյալ տարին դառնալով իր դրած հարցին և նկատի ունենալով արդեն «կովկասցի այգետեր գյուղացուն», առաջարկում է նրա համար «այգեգործական դպրոցներ բանալ», որովհետև «այն ժամանակ միայն կովկասցին կարող կլինի երկրի հարստության այդ ճյուղը ավելի կանոնավոր ձևով մշակել», ազատվել արտասահմանի մրցությունից Ռուսաստանի շուկայում և նույնիսկ արտասահմանյան շուկա դուրս գալ։

Ոգևորված իր ծրագրով՝ նա շարունակում է. «Հայ դրամատերերի ուշադրությունը հրավիրում եմ երկրի արտադրության այս ճյուղի վերա», որից նրանք «հարյուրապատիկ օգուտ կարող են քաղել, քան թե ուրիշ որևիցե գործից»[2]։

Բայց այս բոլորը, իհարկե, կապ ունի նախ և առաջ այգեգործությունը կովկասում կապիտալիստական հիմքերի վրա դնելու տենչանքների հետ, որի հետևանքով գյուղում նոր «գավոդատերերի» թիվը կաճեր, իհարկե, կընդարձակվեր նաև կապիտալիստական արտադրությունը, դրա հետ միասին, սակայն, «հարյուրապատիկ» կաճեր նաև գյուղացու, մանր արտադրող այգետիրոջ կախումն անգամ արտասահմանի հետ մրցելու, ռուսական շուկան

[1] «Մեղու Հայաստանի», 1884 թ., № 76, Էմմանուելի թղթակցությունը Շուշուց։

[2] «Մեղու Հայաստանի», 1885 թ., № 22, Էմմանուել, «Ինչ պետք է արած, որ կովկասցի այգեաեր գյուղացու ապրուստի աղբյուրը չկտրվի»։

գրավելու ի վիճակի դարձած հայ դրամատերերից, ինչ որ դեռ առանց այդ հեռանկարների իրագործման էլ արդեն փաստ էր և մատչելի հենց էմանուելների դիտողությանը, ինչպես վերևում տեսանք։

Ավելացնենք նաև, որ հենց ըստ «Մեղու»-ի տվյալների, Անդրկովկասի մյուս գավառներում էլ կապիտալիստական գործարանն արդեն որոշ նվաճումներ ուներ։ Հատկապես մանրամասն տեղեկություններ հաղորդվում է Օրդուբաթի մետաքսի գործարանատեր Գ. Բաբայանի մասին, որը «յուր ընդարձակ մետաքսյա գործարանով հայտնի է Ֆրանսիայի և Ռուսաստանի բոլոր նշանավոր քաղաքներին և ողջ Կովկասին»։ Գործարանում աշխատում են մոտ 50 տղամարդ և 15-ի չափ կանայք և աղջիկներ, գործարանի պատրաստած «թելը համաշխարհային հանդիսից Կովկասի միջի առաջինն է ընդունված»։ Նույն գավառում «կան մի քանի այլ գործարաններ, բայց դոքա մշտական չեն, այլ շերամի ժամանակ 2—3 ամիս բանում են և փակվում»[1]։

Ինչպես դժվար չէ համոզվել հենց «Մեղու»-ից բերած այս տվյալներից, նրա՝ 70-ական թվականների սկզբների կապիտալիստական արտադրություն կազմակերպելու ծրագրերը 80-ական թ. թ. կեսին արդեն մասամբ իրականություն էին դարձել և, իհարկե, թե գյուղում և թե քաղաքում այն արդյունքը չէին ունեցել գյուղացիական մասսայի համար, ինչ որ գուշակում էր «Մեղու»-ն. բարեկեցության փոխարեն՝ այդ նոր տնտեսական հարաբերությունների հետևանքով աճել էր չքավոր գյուղացիների հոսանքը դեպի քաղաք՝ ապրուստի միջոցներ հայթայթելու համար. նրանց մի մասը, այդ թվում նույնիսկ կանայք և երեխաները, հենց իրենց գավառներում և գյուղերում էին ընկել կապիտալիստական շահագործման ոլորտը, իսկ ոմանք էլ իրենց մանր տնտեսությամբ դարձել էին կապիտալիստական ձեռնարկատերերին հումք մատակարարող և ենթակա նրանց բոլոր հարստահարություններին։

Բայց «Մեղու»-ի ուշադրությունը կենտրոնացած էր ոչ թե խնդրի այդ կողմի վրա, այլ այն հանգամանքի, որ չնայած այդ քիչ թե շատ նկատելի հաջողություններին, այնուամենայնիվ հայ կապիտալիստների արդյունաբերական գործունեությունը ցանկալի տեմպերով առաջ չէր գնում, որ նրանք դեռ չէին ըմբռնում, թե «հարստության հաստատուն աղբյուրը երկրի հարստության մշակության և ձեռագործական գործունեության մեջ է»։ Հայ առևտրական կապիտալը դեռ չէր կարողանում հրաժարվել գործունեության այն ճյուղերից, որոնք իր ժամանակին նրան մեծ եկամուտներ են տվել, որոնց շնորհիվ հայ կապիտալիստներից շատերի հարստության հիմքն է դրվել։ «Մեղու»-ն խարազանում է հայ առևտրականների այդ հին, արդեն նոր ժամանակին անհամապատասխան տրադիցիան. «Մեր դրամատերերը հենց միայն նայում են այս և այն կողմը, թե որտեղ կարելի է մի արքունի կապալ ձեռք բերել, կամ պատրաստ ապրանք առնել ու ծախել, բնավ նոր գործի ձեռնարկելու ձգտումն նոցա մեջ չի երևում»։

«Մեղու»-ի դժգոհությունը շուտով հոռետեսության է փոխվում և Կովկասի տնտեսական ապագան նրան դառն խորհրդածությունների է դրդում։ «Աղքատության և սնանկության» սպառնալիքը կախված է Անդրկով-

[1] «Մեղու Հայաստանի», 1880 թ., № 70, Վիշապաձորի թղթակցությունը Վ. Ագուլիսից։
[2] «Մեղու Հայաստանի», 1884 թ., № 51-ի առաջնորդող։

կասի ժողովուրդների, մասնավորապես հայ ժողովրդի դլխին,—դուժում է «Մեղու»-ն 1885 թ. իր դեկավար աշխատակիցների բերանով։ Վերհիշվում և ամփոփվում են այն պատճառները, որոնց հետևանքն է թվում ներկա տխուր իրականությունը։

Անշուշտ, այդ ամենը հասկանալու համար անհրաժեշտ է նկատի առնել այն կարևորագույն հանգամանքը, որ 1880-ական թվականների սկզբի համաշխարհային արդյունաբերական կրիզիսը հատկապես ծանր և տևական բնույթ կրեց Ռուսաստանում, տևելով մինչև 1887 թ. սկիզբը։ Կապիտալիստական տնտեսությանը հատուկ այդ ցնցումներն առանձնակի ծանրությամբ անդրադառնում են տնտեսական թույլ միավորների վրա, իսկ Ռուսաստանի համեմատաբար թույլ տնտեսական օրգանիզմում Անդրկովկասի ավելի խոցելի լինելու փաստը հիմնավորման պետք չունի, ինչպես և ապացույցի պետք չունի այն իրողությունը, որ մեզ հետաքրքրող շրջանում Անդրկովկասը Ռուսաստանի միջոցով արդեն սկսել էր ներգրավվել համաշխարհային կապիտալիստական տնտեսության ոլորտը և այս կամ այն չափով ենթարկվել նրա բոլոր օրենքներին։ Ուստի գարմանալի չէ, որ Անդրկովկասի հայ բուրժուական մտավորականը, այս կամ այն չափով գիտակցելով այդ ամենը, յուրահատուկ ձևով արձագանքում էր կապիտալիզմի վերելքի շրջանի գրավիչ ակնկալություններին և հիմանդագին ծանրությամբ տոգորվում էր նրա կրիզիսի շրջանի հոսի տրամադրություններով։

Անդրկովկասի դաղութային վիճակի, տնտեսական զարգացման ցած մակարդակի, արտասահմանյան և ռուսական կապիտալների հզոր մրցության բացասական արդյունքները չոչափելի ուժգնությամբ հանգես գալով հատկապես տնտեսական տևական կրիզիսի պայմաններում, չէին կարող ուտոպիզմի առարկա չդառնալ հայ բուրժուական մտքի տարբեր հոսանքների ներկայացուցիչների համար։

Տեսնենք, թե ինչպես էր անդրադառնում այդ ամենին հայ բուրժուական ամենամաջ օրգանը, պահպանողական «Մեղու»-ն։

Անդրկովկասի առատ ու հարուստ անցյալի իդիլիան մերժում է «Մեղու»-ն այսպիսի պարզ պատճառաբանությամբ. «Իսկապես Կովկասցին երբեք հարստություն չի ունեցել։ Կալվածատեր, վաճառական, ծառայող, գյուղացին և մշակը առաջ բավական էին իրենց գրությունովը, որովհետև նոցա կենսական պահանջները հաստատ և նահապետական էին, կյանքը, ապրելը դյուրին էր և անփոփոխ։

Այժմ Անդրկովկասի տնտեսական կյանքը բոլորովին փոխվել է, նահապետական, անփոփոխ կյանքի ու պահանջների փոխարեն հաստատվել է կապիտալիզմի բերած եռուզեռը։ «Երկաթուղու գծերը ծածկեցին մեր երկիրը աջ ու ձախ, ուղտի, գոմեշի և քարվանի փոխարեն այժմ շոգեկառքն է սուլում։ Սև ծովի ափերի մոտ կայմերի անտառներ են երևում։ Օտար աղդեր, լեղուք և դրամագլուխք ծածկեցին Կովկասի երկիրը, որո բնական հարստությունը արտադրության համար պահանջում է այն, ինչ որ մենք չենք ունեցել, այսինքն գիտություն, արհեստ, առևտրական փորձառություն և վստահություն»։

Անդրկովկասի դժբախտությունն այն է հենց, որ օտար կապիտալիստների առաջ, նրանց սարսափելի մրցման առաջ անպաշտպան և անօգնական են տեղացիներն իրենց հաստատ միջոցներով, որովհետև նրանք

գալիս են իրենց «տասանյակ միլիոններով մրցելու մեր խեղճ կոպեկների հետ»։ Այդ անհավասար մրցման արդյունքներն այժմ իսկ արդեն որոշ են, և «Մեղու»-ի սյուներից մեկը, աչքի ընկնող փաստարան և հասարակական գործիչ Սենեքերիմ Արծրունին, որի ընդարձակ հոդվածից են վերևի մեջբերումները, հետևյալ ձևով է ամփոփում այն. «...մեր երկրի մեջ արդեն տարածվում է դրամական տնտեսություն օտարազգի դրամատերերին, ինչպես Բաքվի մեջ, ուր մինչև անգամ վարչության (կառավարության։ Վ. Ռ.) պահպանողական ձգտումները անկարող են՝ օգնել բնակիչներին»։

Անդրկովկասի տնտեսական ապագան է՛լ ավելի մռայլ է պատկերանում Սեն. Արծրունուն հետևյալ պատճառներով. «Հասկանալի է, որ այդ վիճակը երկարատև պիտի լինի և օրըստօրի պիտի խստանա, որովհետև մինչև այսօր մեր դաստիարակությունը, կրթությունը, բարձր ուսումը նվիրել ենք ծառայելու նպատակներին և ոչ աշխատելու, ստեղծելու»։ Ուրիշ խոսքով, հայ ինտելիգենցիան պետական ծառայությունը, չինովնիկի վիճակը գերադասել է իր ուժերը կապիտալիստական արտադրությանը տրամադրելուց։ Ասա՝ հայ կապիտալիստները ոչ մի փորձ չեն արել իրենց նյութական միջոցները միացնել, ընկերություններ կազմել, որ «մի՛ակ միջոցն է օտարների հետ մրցելու համար»։ Դրա հետևանքն այն է, որ մեր երկրում «չկա ոչ մի գործարան, ոչ մի արտադրություն արտաքին փոխանցումների համար»։

Իսկ հայ կապիտալիստները, ինչպես Թիֆլիսում, այնպես էլ գավառներում, հափշտակված են Թիֆլիսի առևտրի «չափազանց տոկոսներ վաստակելու» հեշտությամբ. «Նկատվում է, որ ահագին բազմություն և դրամագլուխ նահանգներից տեղափոխվում է Թիֆլիս «կանտոր» բաց անելու համար»։ Անդրկովկասի հայաշատ քաղաքներից՝ Երևանից, Շուշուց, Բաքվից, Գանձակից և այլն շատերը թողնում են «իրենց քաղաքներում այգեգործությունը, հողագործությունը, ...տեղական հարստության զարգացումն ու արտադրությունը, թափառում են Թիֆլիսի ճահիճների մեջ «կոմիսիոն» վաստակելու»։

Ըստ Սեն. Արծրունու՝ հենց այդ է պատճառը, որ Նուխին, Ախուլիսը, Գանձակը, Երևանը «ընկան» և այժմ այնտեղ չկա ոչ բոժոժի, ոչ բամբակի և ոչ էլ ընկուզենու մեծ առևտուր, որք արտասահմանում մեծ համբավ ունեին և մեծ հարստություն էին տալիս այդ քաղաքներին և նահանգներին»[1]։

Իհարկե, «Մեղու»-ի հրապարակախոսը շատ էր պարզացնում գավառների կապիտալի Թիֆլիս հոսելու պատճառները, ի միջի այլոց, աչքաթող էր անում այն հանգամանքը, որ այդ երևույթը հենց կապիտալիստական հարաբերությունների զարգացմամբ էր պայմանավորված, կենտրոնը կլանում էր գավառների կենսունակ ուժերը, գավառներն ամայանում էին կենտրոնի ձգողական ուժի անվան շնորհիվ։ Իհարկե, վերևում թված գավառական և նահանգական քաղաքների «ընկնելու» պատճառներն էլ այնքան պարզ չեն և միայն կապված չեն տեղերից Թիֆլիս գաղթող, տեղական արտադրության զարգացումը անուշադրության մատնող վաճառականների հետ, ինչպես պատկերացնում էր նա։

Բայց նրա դատողությունների շարանում տվյալ դեպքում մեզ համար

[1] «Մեղու Հայաստանի», 1883 թ., № 6, Ս. Արծրունու հոդվածը «Ներքին տեսություն» բաժնում։

հետաքրքրականն այն է, որ նա սկզբունքորեն պաշտպան է հանդիսանում Անդրկովկասի կապիտալիստական արտադրության զարգացմանը տեղական, ավելի ճիշտ՝ հայ կապիտալիստների միջոցներով։ Անդրկովկասի տնտեսական վիճակը, սակայն, նրան այն եզրակացության է բերում, որ հայկական կապիտալն ի վիճակի չեղավ լուծել այդ խնդիրը. հաջողությամբ մրցելով արտասահմանի և ռուսական կապիտալների հետ, այդ կապիտալը մնաց ցաքուցրիվ, դուրս չեկավ առհասարակ հեշտ վաստակ ստանալու ասպարեզից և չնչին ուժ է մեր երկրում, այդ պատճառով էլ Անդրկովկասում «արդեն տարածվում է դրամական տրկություն օտարազգի դրամատերերին»։

Այստեղից էլ բխում է նրա հոռետեսական եզրակացությունն Անդրկովկասին սպառնացող «աղքատության և սնանկության» մասին, ապա մի շարք դատողությունները դրանց անբարոյականացնող ազդեցության մասին հասարակության բարքերի վրա։

Այդ հոռետեսական տրամադրություններն ավելի ցայտուն և ավելի խտացած կերպով երևան են գալիս «Մեղու»-ի՝ Անդրկովկասի տնտեսական գրությանը նվիրած առաջնորդողներում, որոնց մեջ փաստաբան, գործի մարդ Սեն. Արծրունու վերևում քննված պրակտիկ դատողություններին ու տոնին հակառակ, տիրող են «Մեղու»-ի հայ լուսավորչական խմբագրին հատուկ խրատական-բարոյաքիտական խորհուրդները և սպառնալիքները, թեև հիմնական մտքերն ու եզրակացությունները նույնն են։

«Ս եր կյանքի աղբյուրը մեր երկիրն յուր բնական և արհեստական հարստությամբ պիտի լինի, բայց դորա հարստությունքն օրեց օր անցնում են օտարների ձեռքը, կամ նոքա մեր տգիտությամբ, մեր անհոգությամբ դեպի նորա արդյունավորությունը հազիվ տալիս են մեզ այնքան, որ կարողանանք լցուցանել ներկայի պահանջի հինգերորդ մասը»,—նշվում է «Մեղու»-ի 1885 թ. № 12-ի առաջնորդողում։

Այսպես ուրեմն, մենք չմշակեցինք մեր հարստությունները, և դրանք անցան օտարներին։ Դրա հետևանքով նվազեցին մեր հարստության աղբյուրները և «մերայինք սնանկացան, որովհետև պահանջների և հարստության արտադրության մեջ հավասարակշռություն չպահպանեցին»։

«Հարստությունը և սնանկությունից ապահովությունը չափավորության մեջ է,—շարունակում է բարոյախոսել «Մեղու»-ն,—և մարդուս յուր պահանջները լցուցանելու չափ աղբյուր ստեղծելու և գտնելու շնորհքի մեջ է։ Լճակից, որ ընդունակ է աղբյուրների միայն ջուր տալ, եթե գետ վազեցնեն, կցամաքի։ Այսպես էլ Կովկասի ժողովուրդների վիճակն է»։ 20—25 տարի առաջ նրանք հաժեստ էին և հարուստ, իսկ այժմ շուայլ են և սնանկ։

Եվ ահա «ի շնորհս մեր անխոհեմության» մեր երկրի «ընդհանուր սնանկության վիճակն» է ստեղծվել. «Կովկասի ժողովրդոց, մանավանդ հայոց ապագան թշվառություն է և սորա պատճառն իրենք են»,—մարդարեանում և մեղադրական դատավճիռ է կարդում «Մեղու»-ն,—մանավանդ հայերի ապագան, որովհետև արդյունաբերության զարգացման բոլոր հույսերը կապված էին հայ կապիտալիստների հետ։

Այդ չարդարացած հույսերը մղում են «Մեղու»-ին խտայնել դույները և տեսական տնտեսական կրիպիսի ծանր պայմաններում՝ ընդհանրացնելով մոայլ պատկերը, հանգել այսպիսի հոռետեսական եզրակացության. «Մնան-

կություն նյութական, սնանկություն բարոյական, սնանկություն մտամոր սպառնում է մեզ»[1]։

Ավելի լավատես է իր պրիմիտիվ անգիտությամբ «Մեղու»-ի մի այլ աշխատակից, որը 1886 թ. փորձում է լուծել այն հարցը, թե «Ի՞նչ է պատճառը, որ մեր գյուղացին չի կարողանում օգուտ քաղել իր կալվածքից, և ինչով կարող ենք օգնել նորան»։

«Մեղու»-ի աշխատակցին այդ հարցերն զբաղեցնում են համաշխարհային և ռուսական ագրարային կրիզիսի կապակցությամբ. «Այժմս, ինչպես հայտնի է, առհասարակ ամեն տեղ և առավելապես Ռուսաստանում անսպասելի գյուղատնտեսական ճգնաժամ է»։ Այնտեղ «կազմված են զանազան տեսակ ժողովներ, որոնք ամեն կողմից հնարքներ են որոնում....որ հայրենիքը ազատեն ցավալի դրությունից»։

Նա էլ փորձում է օգնել հայ գյուղացուն, ելք ցույց տալ նրան և պատասխանում է իր դրած առաջին հարցին այսպես. «...մեր գյուղացին չստանալով ոչ մի տեղից խրատ և օգնություն՝ մնացել է և կմնա միշտ տգիտության մեջ և միշտ լաց կլինի, թե աստված չի տալիս»։

Ուրեմն իր տգիտության շնորհիվ է, որ նա չի կարողանում օգտվել իր հողից, իսկ նրա մասին հոգացող չկա. «Մեր հասկացող դասը... դժբախտաբար միշտ մնում է լուռ, չէ՛ ուզում բոլորովին իրան ներկայացնել այն պատկերը, թե գյուղատնտեսությունը ուրիշ երկրներում ինչ հառաջադիմություններ է արել, իսկ հայ գյուղացին միևնույն նույա ժամանակի գործիքն է գործ դնում...»։

Հետևաբար գյուղացուն կարող ենք օգնել՝ նրան ծանոթացնելով զարգացած կապիտալիստական երկրների գյուղատնտեսական աշխատանքի կատարյալ եղանակներին։ Գյուղացուն մոտիկ են կանգնած, նրա հետ ամենօրյա շփման մեջ են գյուղական քահանան և ուսուցիչը, հենց նրանք էլ պիտի լինեն գյուղացուն օգնություն կազմակերպողները՝ նրա տնտեսությունը բարձրացնելու և նրան «ցավալի դրությունից» հանելու գործում. «Ուրեմն հարցը ինքն իրան պարզվում է—մեզ հարկավոր են այնպիսի քահանայք և վարժապետներ գյուղերում,... որոնք լինեն ծանոթ գյուղատընտեսական մի քանի ճյուղերի հետ...»[2]։

Այսպիսով իբր թէ լուծում կստանար երկրորդ հարցը՝ գյուղացուն օգնելու խնդիրը։

Ագրարային կրիզիսի պայմաններում գյուղացու տնտեսության վերելքի հարցերն այսպես էին լուծում «Մեղու»-ի հրապարակախոսները...

Ինչպես հայտնի է, «Մեղու»-ն դադարեց 1886 թ. վերջերին, այսինքն 80-ական թվականների ագրարային և արդյունաբերական կրիզիսի շրջանում։ Հայ պահպանողականների հնագույն օրգանն այլևս հնարավորություն չունեցավ արտահայտվելու Անդրկովկասի կապիտալիստական զարդացման հարցերի մասին, իսկ ինչ որ կա նրա էջերում մեզ հետաքրքրող խնդրի նկատմամբ, վերևում քննության առանք, ցույց տալով այդ ամենի բուրժուական էությունը։

Ինչպես արդեն նշել ենք, «Մեղու»-ի մեջ տեղ են գտել Անդրկովկասի

[1] «Մեղու Հայաստանի», 1885 թ., № 12-ի առաջնորդող։

[2] «Մեղու Հայաստանի», 1885 թ., № 23, Ն. Թառումյանց, «Ի՞նչ է պատճառը, որ մեր գյուղացին չի կարողանում օգուտ քաղել իր կալվածքից, և ինչով կարող ենք օգնել նորան»։

կապիտալիստական զարգացման ընթացքի գնահատության մասին այնպիսի հոդվածներ, որոնց հեղինակները այդ թերթի իդեական գիրքերից չեն ելնում և պաշտպանում են այնպիսի տեսակետ, որ նրանց այս կամ այն չափով մոտեցնում է եվրոպական մանր-բուրժուական սոցիալիզմի և ռուսական նարոդնիկական սոցիալիզմի ներկայացուցիչներին։ Բայց այդ ամենի քննությունը դուրս է մեր այս հոդվածի շրջանակից։

В. Рштуни

Армянские консерваторы о ходе развития капитализма в Закавказье

(Резюме)

Статья посвящена изучению экономической программы армянской консервативной газеты „Мегу Айастани“ („Пчела Армении“). Автор показывает, как в дореформенное время в России и в Закавказье в 70-х и 80-х годах, при первых успехах капиталистического хозяйства у нас в Закавказье, вопросы экономического развития города и деревни приковывают к себе внимание армянской прессы всех направлений: и консервативной („Мегу Айастани“), и умеренно-буржуазной („Ардзаганг“—„Эхо“) и либеральной („Мшак“—„Работник“).

Начало экономического завоевания Закавказья русским капитализмом, начало утверждения западно-европейского капитала в Баку, перспективы экономического развития Закавказья в связи с постройкой железной дороги Баку—Батум, угроза вытеснения местного, главным образом армянского, капитала не только из промышленности, но и из торговли несравненно более сильным русским и западно-европейским капиталом,—все эти новые явления в экономической жизни Закавказья усиленно обсуждаются в армянской прессе, которая, без различия направлений, в общем единодушно старается мобилизовать распыленные силы армянского капитала, объединить его в общества и из области торговли втолкнуть в область промышленности, указывая, что только таким путем возможно для него выдержать конкуренцию иностранного и русского капитала и сохранить свои позиции в экономике страны.

Втягиваемое русским капитализмом „в мировое товарное обращение“ (Ленин, Соч., т. III, стр. 464) Закавказье начинало подвергаться влиянию законов развития капитализма: периоды подъема и кризиса мирового хозяйства отзывались и на его экономике, соответственно находя отклик и в армянской буржуазной прессе, вызывая в ней или воодушевление, или ввергая ее в уныние и мрачный пессимизм.

Все вышеуказанное можно проследить в органе армянских консерваторов „Мегу Айастани“, в статьях, посвященных экономическим вопросам Закавказья.

В условиях экономического подъема конца 60-х и начала 70-х годов, затем конца 70-х и начала 80-х годов „Мегу Айастани" энергично обращает внимание армянских капиталистов на необходимость развития промышленности, обработки естественных богатств Закавказья, на необходимость оставить легкий и ненадежный путь наживы на государственных подрядах и торговле и приступить к промышленной деятельности объединенными силами местных, т. е. армянских капиталистов, чтобы отстоять свои позиции и избежать превращения Закавказья в колонию русского и иностранного капитала.

За те же годы „Мегу Айастани" ставит вопрос поднятия и сельского хозяйства Закавказья и приходит к заключению, что единственное средство поднятия крестьянского хозяйства состоит в том, чтобы вывести его на путь капиталистического развития, развертывая конкуренцию среди сельских хозяев и через открытие сельских банков освобождая их от разрушительного влияния ростовщичества.

Немалое внимание уделяет „Мегу Айастани" и выявлению конкретного хода развития капиталистического хозяйства в Закавказье, в особенности в его армянских районах, и в этой связи затрагивает вопрос об отходе в города на временные заработки и даже на постоянную работу крестьянских масс, вопрос об адских условиях работы первого поколения рабочих в бакинской нефтепромышленности и т. д.

Но в центре внимания „Мегу Айастани" остаются вопросы, связанные с условиями развития капитализма в промышленности и в сельском хозяйстве Закавказья, перспективы же этого развития в середине 80-х годов, в период промышленного и затяжного аграрного кризисов старейшему органу армянских консерваторов представляется в очень мрачных красках.

Экономические последствия тяжелого периода кризиса наводят его на печальные мысли о будущем Закавказья, и он пессимистически пророчествует в 1885 г.: „Нам угрожает банкротство материальное, банкротство моральное и банкротство умственное" (*„Мегу Айастани"*, 1885 г. № 12, передовица).

Так оплакивает крушение своих планов капиталистического развития Закавказья „Мегу Айастани", ввергнутая в панику мировым и общероссийским экономическим кризисом и его последствиями.

В 1886 году орган армянских консерваторов перестал издаваться, не успев вкусить радости нового экономического подъема, как известно, начавшегося в 1887 году.